

ՆՈՒՆԵ ԳԵՒՈՐԳՅԱՆ

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԳԻԾԱՆՔԸ Ն. ՊԱՐՈՆՅԱՆԻ  
«Թ-ԱՏՐՈՆ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ**

ԺԹ. դարի 70-80 թթ. նշանավորվեցին Օսմանյան կայսրության պայմանության դրամարիկ իրադարձություններով՝ փոփոխության անկում, ներքաղաքական ճգնաժամ, ազգային-ազատագրական շարժումների ծավալում, որոնք ուղեկցվում էին եվրոպական մեծ փերությունների քաղաքական միջամտություններով ու բախումներով: 1875 Ներքեզովինայում, ապա Բոսնիայում ծագած ազգային-ազատագրական շարժումների նոր ալիքը փարածվեց Բալկանյան ողջ թերակղզով ու դարձավ հայրնի «Արևելյան ճգնաժամի» շարունակությունը: Նույն թվականի սեպտեմբերին գրաքննչական մարմինների ընդունած օրենքով թերթերի՝ ռազմական իրադարձությունների վերաբերյալ հավելվածներն ու քաղաքական բնույթի փոփոխությունները դրվեցին հսկողության փակ, իրավունք վերապահելով սոսկ պաշտոնական լուրեր հաղորդել: Մեղանշող հոդվածներին սահմանվում էր 1-3 ամսվա խափանում՝ բացի մամուլի համար նախատեսված այլ պարիթիզներից: Պարոնյանը «Թ-ատրոնի» էջերում 1875թ. Բալկանյան իրադարձությունները ներկայացնում էր ծաղրանկարներով և քաղաքական երգիծական մեկնաբանումով: Դա չի վրիպում գրաքննչական մարմինների ուշադրությունից, և նա ժամանակավորապես սահմանափակում է «կամիթի» ժանրը, իսկ երբ հերթը հասնում է նյութերի բնորոշանք, նկատում է, որ ազատ խոսքի դիմողին բանտ է սպասում: «Նողվածներս ալ կվերցնեն, այնպես կգրեն, ինչ ընեն, երեք փարի ով պիտի երթայ նսրի հուն»<sup>1</sup>:

Ն. Պարոնյանի քաղաքական հրապարակախոսության ու երգիծանքի պաթոսի վայրիվերումներն ուսումնասիրվող ժամանակահատվածում համահունչ են օսմանյան գրաքննության խստացումների մակրոթացության և փոփոխության կորագծին:

Բ. դռան հրահանգով 1876թ. սկզբներին օսմանյան գրաքննությունը պահանջեց մամուլում քաղաքական պաշտոնական լուրերը ապափոփոխությանը ներկայացնել, որի նպատակն էր հավասարի իրողությունները խեղաթյուրել: Պարոնյանն աղավաղված նման լուրերը դարձրել էր քննադատության նյութ և ծաղրել համապատասխան բացահայտումներով: Մյուսին բնորոշելով 1876թ. թուրք-սերբական պատերազմի ժամանակ այս կամ այն կողմի ռազմական հաղթանակի անհավանականությունը՝ նա մարտահրավեր է ներդրում օսմանյան գրաքննությանը. «Եթե Պոլսոյ լրագրաց մէկ քանիին հաւատարմութիւնը՝ կայսերական զօրքերն այսօր Բեղգրադի մէջ ըլլալու են...» կամ «Եթե այս հե-

<sup>1</sup> Ն. Պարոնյան, Ընտիր երկեր, Երևան, 1954, էջ 145:

ռազիրն ստաց է, րսել կհերելի թէ սերվիացոց միտքը պատերազմիլ չէ, այլ րտերնին փոխելով քարքիլ խաղալ է մեր գորաց հեր»<sup>2</sup>:

Ն. Պարոնյանը, հեզնանքով Թ-ուրքիայի՝ ինքնուրույնությունից գուրկ քաղաքակա- նությունը, խայթել է հերելայալ խոսքով. «Թ-սպրոն մեր փոլիթիկան բնաւ ծաղրած չէ, մա- նաանդ թէ շար անգամներ գոված է, ոչ թե անոր համար, որ մերն է, այլ անոր համար, որ մեր փոլիթիկան ծաղրելու բան մը չունի»<sup>3</sup>:

Իսկ 1876թ. վերջերին գրաքննության մասնակի թողարկության պայմաններում, նա «Թ-սպրոնի» էջերում քննադատում է արեւմտահայ հասարակական միջավայրի ու Օս- մանյան Թ-ուրքիայի ներքին ու արտաքին կյանքի խոցելի կողմերը:

Ղրիմի պատերազմից հերո սոմանյան բանակի վերակառուցման խնդիրը հրա- րասալ էր: 1856թ. ընդունված Նաթթը Նյունայուն հրովարտակով ամրագրվեց մուսուլման- ներին հավասար՝ քրիստոնյաների գինվորական ծառայության պարտքի ու իրավունքի մասին օրենքը: Այդ քայլով Թ-անգլիմաթի հեղինակները եվրոպական երկրներին փոր- ձում էին իրենց բարենորոգումների մասին վարահություն ներշնչել, որովհերել իրական կյանքում քրիստոնյաների հավասարությունը մուսուլմանների հեր սահմանավիակ էր<sup>4</sup>:

Մոլեռանդ մահմեդականները հրովարտակն ընդունեցին գայրույթով՝ մահացու վի- րավորանք համարելով իրենց եւ «անհավարների» միջել հավասարությունը: Պ. Չիխա- չովի խոսքով՝ «նրանք չէին հանդուրժի քրիստոնյաների րտղ գրները կառքի պարվավոր մասում, իսկ մահմեդականների կանգները կառքի երնամասում»<sup>5</sup>: Այդ հարցում հայ հա- մայնքի դիրքորոշումը մերժողական էր, որովհերել հրովարտակը կառավարության ձեռ- քին լծակ էր մուսուլմանների եւ քրիստոնյաների միջել առճակարման համար, եւ քրիս- րոնյաները նախըրրեցին հարկ վճարելը<sup>6</sup>:

1876թ. թուրք-սերբական պատերազմի օրերին գինվորագրության խնդիրը կրկին հայրնվեց օրակարգում: 1876 նոյեմբերին հրապարակվեց սուլթանի հրամանը, որով գեների էր կոչում 17-45 րարեկան բուր քրիստոնյաներին: Բ. դռան կողմից հայ հա- մայնքի հովվապեր Ն. Վարժապերյանին առաջարկվեց հայերին էլ մասնակից դարձնել գորակոչին: Ազգային ժողովի նոյեմբերի 25-ի նիսրում Մ.Իգմիլրյանը հայրարարեց, թե գինվորագրությունը երթադրում է հպարակների հավասարություն, միևնչեղ կյանքում րիրում է ամենախայրառակ անհավասարությունը<sup>7</sup>:

Պուրսահայ համայնքի րարերը խավեր պարքիարքի շրջարերականը միանշանակ չրնկալեցին: Թ-ուրք-սերբական պատերազմի ժամանակ էֆենդիների կանանց սրերժած կոմիրներից մեկն գրաղվում էր սոմանյան գորքին հանդերձանք ու վիրակապ մարա- կարարելով: Պարոնյանը, հեզնելով այն պարադոքսը, որ առկա էր իրականության եւ ճշմարրության միջել, երգիժանքն ուղղում է այդ կանանց շահագրգիռ գորժունելոյա-

2 «Թ-սպրոն», 1876, 26 հունիս:

3 «Թ-սպրոն», 1876, 15 հունվար:

4 Տնն Ա.Դ.Նովեբ, *История Турции, Новое время*, часть 3 (1853-1875), Л., 1978, ст. 85.

5 Ս.Դ.Չիխաչев, *Великие державы и восточный вопрос*, М., 1970, ст.128:

6 Տնն Ա.Փալիսզյան, Թ-ուրքական վավերագրերը Նայասրանի եւ հայերի մասին, Երեան, 1999, էջ 232:

7 Տնն «Արենագրութիւն ազգային ժողովի», հ. դ., Կ.Պոլիս, 1877, էջ 318:

նը, հավասարիացնելով, թե՛ «...այս մարդասիրական մեծ գործմ՛ է, որ հայ արիկները թիֆթիկ շինելու ջրլային կայսերական բանակի գորաց վիճակը շար գէշ կըլլար հիմա, օրհնեալ է Աստուած, թիֆթիկ շինել սկսան, գորքերը քիչ մը շունչ առին: Աղէկ ա թիֆթիկ թող շինեն»:<sup>8</sup>

Պարոնյանը քննադատել է նաև օսմանյան կամավորական ջոկարներում ծառայելու ցանկություն ցուցաբերող հայ մտավորականներին: Անթաքայց է նրա հեզմանքը իր վաղեմի բարեկամ Ն.Վարդովյանի հանդեպ, որը պատերազմի ժամանակ օսմանյան բանակում կամավոր ծառայության ցանկություն էր հայտնել. «Ես կըսեմ թէ Վարդովյան էֆենդին հայրենասիրական զգացումներով վառեալ այդ որոշումը ըրած է, սակայն չգիտեմ, թէ միշտ կառքով պարտելու վարժուած մէկը, իր մօրութիւն սանտրին արող մէկը ինչպէս պիտի կրնայ զինուորիս ընել: Ուրիշ բան եթէ սկսիս յայտնել (պարագարակ Ն.Գ.) երթայ կամ անսեկանով մէկը բռնէ իր սուրը անոր քաշել փայտ համար»<sup>9</sup>:

Խորասանճյանի «հայրենասիրությունը» Պարոնյանը ծաղրում է սրամիտ հեղինակ ձևակերպումով «Քոմբրէսը ի՛նչ է, վերքի վրայ դնելու համար քառակուսի բարձիկ, միս չափերն ալ քօքթոր Խորասանճեան էֆենդին փուր է, որ քոմբրէսները այդ չափերուն վրայ շինեն»:<sup>10</sup> Երգիծական աշխույժ խոսքով է Պարոնյանը ներկայացրել Տիգրան Յուսուֆյանին և Թագվոր Պարպիզպանյանին. «Օրթագիտի մէջ քսանի չափ հայ ազնուականներ իրենց կամօքը զինուոր գրուեսցան, որոնց գորապէսը պիտի ըլլայ Թագուոր Պարպիզպանեանը որուն քաջութիւնը արդէն ծանօթ է, իր կոտորածներով, գորս ըրած է փաճկերէնէ ֆրանսերէնի թարգմանութեան մէջ»<sup>11</sup>:

«Նոր օսմանների» պարագլուխ Միդիսար փաշան թուրք-սերբական պատերազմի ժամանակ, իրենց կուսակցության սկզբունքների արդարացիությունն ապացուցելու համար փարբեր ազգերից բողոքացած կամավորական ջոկարներից մեկի դրոշի վրա ասարդի և կիսարունի կողքին քրիստոնեության խորհրդանիշ խաչի առկայությունը քաջալերում էր որպէս միասնական հայրենիքին ծառայելու պարտաւոր, էթնոգափառական գործուն անփութաժ հայրենասերների կամքի արտահայտություն<sup>12</sup>: Պարոնյանը իրողությանը արձագանքել է հուզախառն հեղինակ խոսքով՝ «Քրիստոնեա կամատրաց դրոշակները փետա՛ք: Ինչ ըրին չըրին մեր քառաթե սուրբ խաչն ալ կոյոյ մասնակից ըրին»<sup>13</sup>:

Պարոնյանը զինվորագրության խնդրին անդրադարձել է նաև 1877-1878թթ. պատերազմի փարիներին և թուրքական վարչական կառույցներում պաշտոն զբաղեցնող հայերին խարազանել փաստի հանդեպ ցուցաբերած հանդուրժողականության համար՝ ակունքները որոնելով նրանց օգտապաշար հոգեբանության ծալքերում: Մարիթական

8 «Թագուոր», 1876, թ. 188:

9 «Թագուոր», 1876, 22 դեկտեմբեր:

10 «Թագուոր», 1876, թ. 188:

11 «Թագուոր», 1876, 22 դեկտեմբեր:

12 Տե՛ս **И. Фадеева**, *Мидхад наша жизнь и деятельность*, М., 1977, էջ 80:

13 **Ն. Պարոնյան**, Երկերի ժողովածու, Մ. 4, Երևան, 1965, էջ 36:

հնարքով շահադիպական նրանց հոգեբանությունը նա դրսևորել է գրական երկխոսության մի փոքր դրվագով:

«- Ուստիոյ դեմ կուզէք պարերագմիլ:

-Այո, պարերագմիլ կուզենք, կուրծքին զարնելով մեռնիլ կուզենք, բան թէ մեր անկախութիւնը վնասուած փեսնենք: Ո՛ն, մեր անկախութիւնը մար չենք դպցուներ, այդ չրլար:

-Բայց մեծ զօհողութիւններ պէտք է, կարո՞ղ եք դիմանալ.

-Կարող ենք, անօթի կմնանք եւ կպարերագմենք, առաջ Աստուած:

Այսպէս պարասխաններ փոխն գրեթէ ազգի բոլոր գոյիւնները, ուրիշ կերպով չէին կարող պարասխանել, կքարկոծուէր եթէ հանդգնէր մէկն ըսել՝ չպարերագմինք»<sup>14</sup>:

1877-78թ. Օսմանյան կայսրության բազմազգ ու բազմադավան շփոթում կար եւ Ղրիմի 1856թ. պարերագմից հետո Թուրքիայում եւ Բուլղարիայում հասարակած չերթեզներին նոր բնակավայր հարկացնելու խնդիրը: Բ. դուռը որոշեց նրանց փոխադրել Կարսի եւ Էրզրումի նահանգները, որին դիմադրեց Ռուսաստանը: Միայն Լորիս Մելիքովի եւ Պոլսում Ռուսաստանի դեսպան Իզնարեի միջամտության շնորհիվ հարցը լուծվեց նրանց փոխադրելով Նախեյի եւ Սարիղամիշի շրջակայքը<sup>15</sup>: Որոշ աղբյուրների հավասարմամբ չերթեզների մի զանգված բնակություն է հասարակել Լեռնային Կիլիկիայում եւ Ազիզ փաշայի բանակում ծառայելով, օգնել նրան ճնշելու Զեյթունի 1862 թվականի ապստամբությունը<sup>16</sup>: Այս մասին Ֆրանսիացի մրավորական Վ. Լանգլուան գրել է. «Ապստամբության հրահրիչը մուսուլման չերթեզներից ու ավշար ցեղի քրդերից բաղկացած Ազիզ փաշայի բաշիբոզուկ զորքն էր»<sup>17</sup>:

Օսմանյան կառավարությունը փորձեց փոխել հայաբնակ քաղաքների ժողովրդագրական պարկերը Դիարբեքի, Մոսուլի, Զեյթունի վիլայեթներում՝ այսպիսի արքայություն բուլղար հեղափոխականներին: Պահպանված մի վավերագրում նշված է, որ Դիարբեքի արքայութան հեղափոխականներին հայերը նյութապես ու բարոյապես աջակցել են, որի համար թուրքերը ազգամիջյան թշնամանք են հրահրել, գոհելով թե՛ հայերի, թե՛ բուլղարների<sup>18</sup>: Թուրքական կառավարությունը թերթերի միջոցով չերթեզներին ու քրդերին հովանավորում էր Զեյթունում իրականացվող անիրավությունները վերագրելով արքայութան բուլղար հեղափոխականներին: «Վարքթի» նյութերին իրազեկ Պարոնյանը հակասական իրողությունների վրա կառուցված սրամիտ իր խոսքում Վեհապետին հորդորում է հանցագործներին պարժելու համար արդարակշիռ վճիռ կա-

14 Տոսուսի ձեռարկերը, 10 հուլիս, Ն.Պարոնյան, Երկերի ժողովածու, Ն.4, Երևան 1965, էջ 69:

15 Տե՛ս **Ա. Ավաքյան**, *Процесс массового переселения северокавказских мусульманских племен в Османскую империю (1858-1874)*, «Թուրքագիտական եւ Օսմանագիտական հետազոտություններ», Երևան, 2002, էջ 11:

16 Տե՛ս **Մ. Ներսիսյան**, Նայ ժողովրդի պայքարը թուրքական բռնապետության դեմ. 1850-1890թթ., Երևան 2002, էջ 86:

17 Տե՛ս **Langlois**, *Les armeniens de la Turquie et les massacres du Taurus*, Extrait de la "Revue des deux mondes", Paris, 1863, էջ 27-28.

18 Вызывова- Каратеодорова, Армяно-болгарские связи 70-их годов 19-ого века, по данной болгарской рукописи, д'Р, 1984, Г.1, էջ 143-151:

յացնել, որովհետև քրդերի ու չերքեզների փոխարեն մեղադրվում էին բուլղար արքայականները. «Վարքթին նայելով Թուրքիա շար անգամ բուլղարները քիւրդի կամ չերքեզի կերպարանք մ'ըցնելով անոնց ձեռքովը հարստահարութիւն բնել կուրան եղեր: Չըլլայ, որ Ջէյթունի քայմաբանն ալ պուղար մը ըլլայ: Ինչպէս հասկնալու է, որ Վանը կրակի փռուղները Կարսի եկեղեցին կողոպտողները պուղար չէին, չեն բռնիք թշուարականները որ հասկնայինք»<sup>19</sup>:

Թուրքիան ժամանակին Անապոլիայի հայաբնակ փարածաշրջանը բնակեցրեց քրդերով՝ հայկական միջավայրի փոփոխության հիմքերը խաթկելու, վարչաժողովրդագրական պայակերը փոխելու և հայաթափումն արագացնելու ակնկալիքով<sup>20</sup>: Չեչննելով բնակեցնելու նոր համալրումները հանդիսացան այդ գործընթացի շարունակությունը՝ ի նպաստը հայության ուժացման: Իրողությունը դարձավ Պարոնյանի քաղաքական սարկարայի առանձին հրապարակումների բովանդակությունը՝ բացահայտելով երևույթի բնկերային-փոփոխական, ազգային ու միջազգային հետևանքը: Չերքեզների ավազակաբարո հոգեբանությունը նա ուրվագծել է «Մասիսում» հրապարակված սրամիտ մի ֆելիտրոնով, ուր նրա սարկազմը հասել է գրոպեսկի մակարդակի, երբ խոսքը Բալկաններից գաղթած և Պոլսի ոսկու շուկայում սլավոնական թալանված հոգեուր սպասքի վաճառքով զբաղվող չեչնի մասին է. «... սկսայ ինքնիրմէս մտածել, թէ ոսկերչաց շուկային մէջ երբեւէ որու արդեամբ շինուր են շարժական մատուռները: Ժամ մը ետքը փողեկացայ, որ այս մատուռները սլաութեան հակառակ ըլլալով թշնամոյն մօտենալը փեսնելուն պէս Պոլիս գաղթեր են»<sup>21</sup>:

Ն. Պարոնյանը մեկ այլ առիթով երգիծանքն ուղղում է անգլիական դիվանագիտությանը, որի միջամտությունը բացահայտ էր և գաղափարն իմաստավորվում էր՝ չափազանցությունը հասցնելով պարադոքսի. «Մա չերքեզներուն ալ փող մը չգրնուցավ որ այս հոգսէն խախինք: Եթէ ինձի հարցի կառաջարկեմ Սուլթերիի փունը փոխադրեն չերքեզները»<sup>22</sup>: Նույն գաղափարի հանգուցալուծումը Պարոնյանը ներկայացրել է թափանցելով իրողության խորքը, ուր թաքնված էր մեկ այլ ճշմարտություն՝ կապված չերքեզների Արևմտյան Նայաստան մեկնելու հրաժարվելու հետ. «Կառավարութիւնը եթէ իսկ դրկել ուզէ չերքեզները չեն էրթար, ինչու որ հայաբնակ գիտերուն մէջ գողնալու բան մը չմնաց: Իսկ եթէ կայ՝ այն ապեն քիւրդերը չեն թողուր որ չերքեզները մօտենան, որովհետև իրենց շահուն կոխաչի»<sup>23</sup>: Իհարկե, վշտախառն է Պարոնյանի ծիծաղը Արևմտյան Նայաստանից հայերին օտարելու վրանգին դիմակայելու ջանացող հայ հասարակական ուժերի ներկայացուցիչների անգործությունը շեշտելիս. «Լսածներս նայելով՝ մեր ազգէն ալ քանի մը կրօնատորներ Ամեն Ս. Պարթիարքին աղաչել են՝ աղաչել Բ. դռան, որ հայաբնակ գիտերն ալ չըրկին (չերքեզների մասին է խոսքը Ն.Գ.): Ըստ մեզ այս առաջարկութիւնը պարապ բան մ'է»<sup>24</sup>:

19 «Թ-սարբուն», 1877, 16 ապրիլ:

20 Տե՛ս Ն. Արոնց, Թուրքիայի անդամահատումը. Նայկական հարց, ՆԱ, Երևան, 1996, էջ 104:

21 «Մասիս», 1878, 28 հունվար:

22 «Թ-սարբուն», 1877, 12 հունվար:

23 «Մասիս», 1878, 31 նոյեմբեր:

24 «Մասիս», 1878, 31 հունվար.:

Պարոնյանի երգիծանքի աշխարհում «Ազգային ջոջերից» բացի կա եւ միջազգային քաղաքական գործիչների մի համախումբ, որ 1877-78 ռուս-թուրքական պայերագմի ժամանակ իրենց երկրի դիվանագիտական շահերից ելնելով՝ որոշակի եղանակ է սրելով միջազգային իրադարձությունների ընթացքում: Սուր բնութագրումներով եւ հրապարախոսական ոճով գրված նյութերում նա սրելով է վավերական պատգծով ապահովված քաղաքական գործիչների կերպարներ, ուր ամրագրել է իր մտքումները, սարիրան ամփոփելով գեղարվեստական խոսքի յուրօրինակ որակով: Քաղաքական այդ գործիչների շարքը քննելիս նկատելի է կաշկանդվածության բացակայությունը, խոսքը բացեիբաց է, որովհետեւ Թուրքիան գրաքննական խսրագումներն իրականացնում էր միայն ծաղրանկարների եւ երկրի արարաքին քաղաքականությունը շոշափելու պարագաներում:

«Թարրոնի» նյութերում դիվանագետների գործունեությունը բնորոշելիս Պարոնյանը որսացել է նրանց հետ կապված երևույթների ծիծաղելի կողմը եւ կերպարներն ամփոփել է ճշմարիտ ու արդարացի խոսքով:

Գերմանիայի դիվանագետ Օ.Բիսմարկի նկարագրին Պարոնյանը բազմիցս է անդրադարձել, ցույց րարով, որ նա «Արևելյան ճգնաժամի» ժամանակ երոպական երկրների ներհակ հարաբերություններում մշարապես սրելով է ինճված մթնոլորտ Գերմանիայի ամբողջարիրական շահերն ապահովելու համար: Իսկ ռուս-թուրքական պայերագմի ժամանակ երկակի խաղերով՝ մի կողմից Ռուսաստանի հետ բարեկամական դիրք էր դրսևորում եւ իրականում Թուրքիային հրահրում պայերագմի՝ թույլ չրարելու Ռուսաստանի թափանցումը Բալկաններ: «Այս մարդը, գրում է Պարոնյանը, խաղաղությունը ապահովելու պիրի աշխարի եղեր, եթէ Ռուսիա Թուրքիոյ դեմ պայերագմ յայրարարէ՝ այս իշխանը թող չպիրի րայ եղեր, որ միս պերությունը միջամրեն: Ըսել է, որ եթէ միս պերությունը Ռուսիան Թուրքիոյ հետ հաշրեցնելու համար ալ միջամրություն ընել ուզեն՝ Բիսմարկը թող չպիրի րայ, որպեսզի խաղաղությունը չվրդովի»<sup>25</sup>: Պարոնյանը նախօրեին «միջազգային մակերի» պայմանական նկարագրի վերաբերյալ Պարոնյանը ունի դիպուկ գնահարական, երբ բնութագիրը դառնում է էությունը բացահայրելու միջոց, հավասարիացնելով, որ անգամ Անգլիան նրան է դիմել գործին միջամրելու համար. «Ի՞նչ կուրաք ինճի միջամրելու համար, կհարցնէ իշխանը: Այս խոսքէն կյայրնուի, որ եթէ Բիսմարկ իշխանին հարիրին րասը քօմիսիոն մը րանք պիրի հաճի գործին մէջ մրնայու»<sup>26</sup>:

Ավարո-Տունգարիայի քաղաքական շահերը պայերագմի ընթացքում կապված էին Բոսնիան եւ Տերցեգովինան Տարբորգների կայրության սահմաններում ներգրավելուն, եւ ջանքեր չէր ինայում Բալկաններում Ռուսաստանի թափանցումը կանխելու, որն ի նպաստ էր սրվոնական պերության կազմավորմանը: Արարաքին գործերի նախարար Անդրաշին այդ առթիվ գրում էր, որ Թուրքիայում Ռուսաստանի դեսպան Իգնարեր դեմ է ամեն րեսակ որոշումների, որոնք կվերաբերեն Բոսնիայի եւ Տերցե-

25 Տ.Պարոնյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 78:

26 «Թարրոն», 1876, 20 նոյեմբերի:

գովինայի քաղաքական ինքնորոշմանը<sup>27</sup>: Այդ իմաստով Թուրքիայի ամբողջավարտության պաշտպանությամբ նրա հանդես գալը պարճառաբանված էր, բայց մյուս կողմից Գերմանիայի դրոշմամբ առերես Ռուսաստանի հետ նա դաշինք էր կնքում: Բանահյուսական մի պատումով, ուր շոշափվում էր արջի անհավասարությունը, Պարոնյանը Ավստրիան անվանում է անվստահելի գործընկեր. «Ով Ավստրիոյ խօսքին հաւարայ միշտ մինակ կմնայ»<sup>28</sup>: Ավստրո-Նոնգարիայի փոփոխական քաղաքականությունը Պարոնյանն ամփոփել է երգիծական այլաբանությամբ «Քլեքի Բանալի» ֆելիեպոնում, ուր գավեշտականը դրսևորվում է դրության կոմիզմ: Իբրևս պահակ ավստրացի պաշտոնյան բանալիները ձեռքը մերթ բացում, մերթ փակում է նավահանգստի դարպասները, խորհրդանշելով իր երկիրը, որ Ռուս-թուրքական պայերագմի ժամանակ երկակի դիրքորոշում ուներ. «Ավստրիա Քլեքի նավահանգիստ մեզի գոցելէն երբը նորէն բանալու միտք ունի եղեր... ինչո՞ւ գոցեց, ինչո՞ւ... ինչի փանք այս փոփոխությունները, արդեօք Աստրիոյ շահերն այն արևեր գոց, հիմա բաց կպահանջէ կոր: Եթէ այդպէս է Աստրիոյ շահերը շար փոփոխամիտ են եղեր»<sup>29</sup>:

1856 թ. Փարիզի դաշնագրից հետո Ֆրանսիան Սևծովյան նեղուցների հարցում Ռուսաստանի փազնապալից բարդությունները հաճախ լուծում էր եւրոպական երկրների միջավայրում, թեև քաղաքական շար խնդիրներում նրա դիրքը չեզոք էր: Պարոնյանը երկխոսությամբ կառուցված մի ֆելիեպոնում ընթերցող հասարակությանն է ներկայացում իր գնահատականը. «Մա Ֆրանսային լուրթիւր Ձեզի գարմանք չպարճառեր: Աշխարհ փակնովրայ կրլայ, արոր հոզն անգամ չէ»:

- Ֆրանսա, դեսպանաժողովին մարդ մը դրկէ քու կողմէ:
- Որովհետև իմ կողմէս մարդ մը ուզեցիք, թող մէկը երթայ:
- Մարդ չենք ուզեր:
- Շար, աղէկ մարդ չերթար<sup>30</sup>:

Փարիզյան հաշտության պայմանագրով Ռուսաստանը գրկված էր Բեսարաբիայից, իսկ Մոլդավիան ու Վալախիան իրավաքաղաքական հսկողության փակ էին: 1862թ. մայիսի 22-ին նրանք միավորվեցին, եւ իբրևս պետություն ձևավորվեց Ռումինիան: 1866թ. մայիսի 22-ին Նապոլեոն Գ.-ի եւ Բիսմարկի ջանքերով իշխանությունն այնպեղ հանձնվեց Կարլ Նոնեցոլերին: Քաղաքական այս շրջադարձերն իրականանում էին առանց Փարիզի դաշնագրին մասնակից պետությունների համաձայնության, եւ որպէս խախտում Ռուսաստանը փորձում էր առիթից օգտվել՝ համաձայնություն կնքել Ռումինիայի հետ, ապահովել Դանուբով հաղորդակցությունը, հանգամանք, որ կարևոր էր հավաքակից սլավոնների հետ ռազմական, մշակութային, փոփոխական ու հոգևոր կապերի պահպանման համար: Ըստ երևույթին, Նոնեցոլերին իշխան ճանաչելու խոստումը լրագրողական աշխարհում շրջանառվող լուրերից էր, եւ Պարոնյանը Ռու-

27 Տե՛ս “Записки графа Н.П.Игнатъева”. “Исторический вестник”, 1914, № 6, էջ 831—832:

28 «Թ-ստրոն», 1876, թ. 207:

29 «Թ-ստրոն», 1876, 7 հոկտեմբեր:

30 «Թ-ստրոն», 1876, թ. 210:

սասարանի երկմարանքը ու Ռուսինիայի ուլտրալիստիկ պահանջը ներկայացրել էր բառախաղերի երգիծական հնարքով. «Ռուսնախոյ իշխանին հետք ալ չխորաթիւր, Ռուսիայ կայսրը թագաւոր փիւրղոսը փայ խօսարացեր էր.....»

-Նամբերէ, փղաս, սա քրիստոնէից վիճակը բարութեմ, վերջն ալ բու վիճակդ պիտի բարութեմ: Ըստ մեզ Բիսմարկ ըսած ըլլալու է Գորչակովին, որ Ռուսինիա պիտի մրտնաք, սա փղային պօշ մի հանէք, բան մը փվէք հօշ էրթայ: Գորչակովն ալ պարասխանած ըլլալու է:

-...Անիկա թող մեր խօսքը մտիկ ընէ, մենք անոր խաթրը խօշ կրնենք», եւ Պարոնյանի խորհրդածոյթունն ավարտելով է Նոննեցուրնի հետեւյալ խօսքերով. «Մինչև թագաւոր փիւրղոսը չառնեմ, թող չեմ փար, որ իր գօրքերը դուրս ելնեն»<sup>31</sup>:

Պարտերագմի ժամանակ Ռուսինիան պարտավոր էր չեզոք դիրք գրավել, որը խախտելով էր ռուսներին կողմից, եւ Ռուսինիայի փարածքով անցնող երկայնուղին գորք ու գինամթերք էր մարտաբարտում Սերբիային: Այդ իմաստով վավերական արժեք ունի Պարոնյանի Ֆելիստոններից մեկը, որ բացահայտում է ռուսին օգրապաշար սահմանապահի կերպարը: Ծիծաղելի հիմքը դարձնելով գաղափարի ու ձեռի հակասությունը՝ նա մարմնավորել է երկրի «ռուսամեք» կողմնորոշումը. «Շոգեկառքերը անդադար կբանին, ռուս գինորները հակառակ իշխանին կամաց կուզան-կերթան, իշխանը քսակը կգիրցունէ եւ երբեմն ոսկիները խառնելով կբռա:

-Ինչ թող կուրաք, որ ռուս գինորները անցնին, չգիտէք որ ասիկա մեր չեզօքութեանը կվնասէ:

Վնաս չունի իշխան, բաւական է, որ գանձուն չվնասի:

-Ան ալ կայ, յա, աշխարեցէք, որ իմ կամացս հակառակ անցնին գօրքերը:

-Շար աղեկ, փէր, դուք անհոգ եղէք:

-Աղեկ չեզօքութիւն»<sup>32</sup>:

«Արևելյան ճգնաժամի» խառնարանում Անգլիան, օգրվելով գերտերության կարգավիճակից, միջազգային կյանքում թելադրող էր եւ Թուրքիայի ամբողջարիքության քարոզարշավով հետապնդում էր իր շահից բխող աշխարհաքաղաքական փարածքային փոփոխություններ՝ Նոդկասարան փանող ճանապարհի անարգել ապահովում եւ Սեւ կամ Միջերկրական ծովերի կղզիներից մեկում ռազմածովային հենակետ ունենալու հնարավորություն:

Ներկայացնելով Ռուսասարանի եւ Անգլիայի միջեւ կայացած լրագրողական մի երկխոսություն՝ Պարոնյանը փորձել է ձեւակերպել Նոդկասարանի նկարմամբ Անգլիայի շահագրգռությունների շրջանակը: «Արնաս կարծել որ Նոդկասարանի ճամբան գոցելու ըլլաս եւ իմ շահուս վնաս հասցնես նէ ես ասանկ անարարքեր մնամ, ես որ Թուրքիայ ամբողջարիքութիւնը պաշարպանելու պարտաւոր եմ, -ասում է Անգլիան, իսկ Ռուսասարանը պարասխանում է,- մեր միտքէն արանկ բան մը անցած չէ, մեր նպարակը միայն սա

31 «Թարրոն», 1877, 16 ապրիլ, թ. 248:

32 «Թարրոն», 1876, 20 հոկտեմբեր:

քրիստոնեից վիճակին բարութունն է»<sup>33</sup>: Թուրքիայում ապրող քրիստոնյաների վիճակը բարվոքելուն «մրահող» անգլիական դիվանագետներին Պարոնյանը մեկ այլ դեպքում ներկայացրել է հետևյալ դիպուկ խոսքերով. «Լորդ Ռոսել Թուրքիոյ բարեկարգելուն կփափաքի եղեր և ոչ Ռուսիոյ՝ Պոլսոյ փիրապետելուն: Լորդ Կլադսոնը Բուլղարիոյ անկախութիւնը կփափաքի եղեր, յորդ Դերբին ընդհանուր բարեկարգութիւն»<sup>34</sup>:

Ռուսաստանի արքային կողմնակալ քաղաքականությունը շոշափելիս Պարոնյանի երգիծական շեշտադրումներն ավելի ակնհայտ են: Առաջնորդվելով նվաճողի քաղաքականությամբ՝ «Արևելյան ճգնաժամի» առանցքը նա համարում էր միայն բալկանյան սլավոնների վիճակի բարվոքումը: Քրիստոնյա հայերի հանդեպ Ռուսաստանի անտարբերությունը Պարոնյանը բառախաղերի միջոցով է արտահայտել. «Եւ այսպէս խօսելով՝ ռամիկ ժողովրդին պիտի կլլեցունէ թէ Յիսուս խտրութիւն կդնէ հայ եւ սլաւ քրիստոնեից մէջ, թէ Յիսուս սլաւները հայերէն շար, ոչ ... հայերը սլաւներէն նուազ կսիրէ: Զրպարութիւնսզրպարութիւն+անիրաւութիւն-մարդկութիւն=սլաւութիւն»<sup>35</sup>:

Ռուսաստանը փռեղյակ էր հայ համայնքի խնդիրներին: Նանրահայտ էին դեսպան Պ.Իզմապրեի շփումները հայ հոգևոր դասի հետ: Վերջինս Ս.Ասրվաձաձին եկեղեցուն 140 օխա (կգ-ից ավելի կշռաչափ, Ն.Գ.) քաշով զանգ է նվիրել, որը քննադատության թիրախ էր դարձրել Մ. Մամուրյանը. «Ասրուամ մեզի օխային փակ չձգէ»<sup>36</sup>: Զարկի փունակապարությունների առիթով դեսպանի այցելությունները պարբերաբար նսակավ չէին, իսկ համայնքի մեծամեծների հետ հարաբերությունները ջերմ<sup>37</sup>:

Այս ամենը չի խանգարել, որ այլ թուրքահպատակների պես հայերն էլ անբեռնալիք բերն ինքնօրինության արժանի մի ժողովուրդ: Վելիկոռուսական քաղաքականության ենթաշերտերում իշխող հոգեբանությունը Պարոնյանն ընդգծել է չերքեզների՝ Բուլղարիայից Արևմտյան Նայաստան փոխադրելու առթիվ Ռուսաստանի արքային գործերի նախարար Գորչակովի դրսևորած վարքագծից. «Չերքեզներն ալ Ասիա փոխադրվելու են: Զարը չնոռնար այս խօսքը կրկնելու ամեն անգամ, որ քրիստոնեից վիճակին բարութմանը վրայ խօսիլ կհաճի, բայց կմոռնայ, թէ Ասիոյ հայերը ուր փոխադրուելու են: Եթէ Զարը բարեհաճի գիպրնալ թէ հայերն ալ քրիստոնեայ են, այս առաջարկութիւնը չպիտի ընէ, որովհետև անով չերքեզներուն վիճակը բարութմա՞ծ կըլլայ քան թէ քրիստոնեից»:

Պարոնյանը չի թողարկել իր վերաբերմունքը նաև պեպարությունների փոփոխակիք դեմքերի նկատմամբ. Ալեքսանդր Երկրորդ ցարի նկատմամբ իր ունեցած վերաբերմունքը երկփեղկված է: Չկասկածելով, որ Օսմանյան կայսրության փիրապետության փակ ապրող քրիստոնյաների վիճակի բարվոքումը սոսկ միջոց էր ռուսական կայսրության ծավալապաշտական քաղաքականության իրականացման համար, նա սարկագնով դիմում է նպատակը գործի դնելու հետ կապ չունեցող՝ ցարի անհամարելի պարճառաբանությանը. «Զարը քրիստոնեից վիճակը բարութելու համար պիտի պարտերագմի թէ

33 «Թ-սարոն», 1877, 4 մայիս:

34 «Թ-սարոն», 1876, 29 սեպտեմբեր, թ. 193:

35 «Թ-սարոն», 15 նոյեմբեր, 1877:

36 «Արևելյան մամուլ» 1877, էջ 13:

37 Տե՛ս «Ասիա», 1874, 13 մայիս:

իւր գորաց Սուրբ Գեորգայ պապուանշան բաշխելու համար: Եթէ Ձարին առաջին օրը իւր գորաց ուղղած խօսքերուն նայինք, այնպէս կհասկացի, որ գորքերը իրմէ պապուանշան խնդրեր են և Ձարն ալ նկատելով, որ բան մը չեղած պապուանշան րայն անկողի է, որոշեր է գորաց սիրտը չկոտրելու համար պատերազմ հրատարակել, որպէսզի քրիստոնէից վիճա... ոչ որպէսզի իր գորաց սուրբ Գեորգայ պապուանշան րայ»<sup>38</sup>:

Անգլիայի թագուհի Վիկտորային Պարոնյանը ներկայացրել է երգիծական համարձակ խոսքով, ուր րպավորիչը նրա սարկաստիկ «հուզական ընկալումն է»: «Թագուհին մեծ ցավ զգացեր է եղեր դեսպանաժողովի ապարդիւն ըլլալուն վրայ, բայց չյայրներ թէ այս ցար մարմնոյն որ կողմը կզգայ, որպէսզի պէրք եղած դեղերը դրկենք ու ցան անցնենք»<sup>39</sup>:

«Արեւելյան ճգնաժամի» ընթացքում Իրալիան Ավստրիայի և Ֆրանսիայի հետ ուներ սահմանային խնդիրներ և միջազգայնորեն բեւեռացված էր: Իրադարձությունների այդ խճանկարում նրա քաղաքական մասնակցությունը Պարոնյանը մարմնավորել է Նոմի պապի պասսիվ գործունեության շեշտադրումով և Ներցեզովիւնայի հուզումների ժամանակ ուշացած կոնդակի առիթով գրում է. «Պապին այս պարվերը կնմանի այն մարդու պարվերին, որ կրակը մարելէն երբք կրակը մարել կպարտիրէ»<sup>40</sup>:

Պարոնյանի դիմաշարի քաղաքական «համետը» գործիչներից է Սերբիայի իշխան Միլանը, որի մրահոգությունը թուրքական լծից երկրի ազատագրումն էր՝ հետանկարում ունենալով ավարտարիական կարգերից կապիտալիստականին անցնելու նկատառումը: Երկխոսությամբ գրված Ֆելիետոնում Պարոնյանը Միլանին մարմնավորել է անհնազանդ հպարակի կեցվածքով, որը երոպական երկրների պարերազմական հրահրումներից օգրվելով, նախապարտարվում էր պարերազմական գործողությունների:

«Բ. դուրք, րեսներով Միլան իշխանին այս պարտարությունները հարցուց.

-Միլան.

-Միլանիկ.

-Ձայն չես րար Միլան... սա Միլանը հոս բերէք.

-Նոս եմ, հոս.

-Ինչ կրես կոր

-Տղարք կծեծկրին կոր, ես ալ դոան առջեւ նարած կդիրեմ կոր.

-Դուրք գոցէ ներս զնա... այս խօսակցութեան վրա Միլանը սահմանէն դուրս եկաւ և

իր մեծին դէմ ապարամբեցաւ»<sup>41</sup>:

Պարոնյանի մրահոգությունը Թուրքիայում ապրող բոլոր ժողովուրդների հանդեպ բխում էր նրա հումանիզմից և իբրև երկրի քաղաքացի, պարտախանալովության զգացումից՝ մարդկային հարկանիշներ, որոնք բնորոշ են մեծ երգիծարաններին:

Թուրք-սերբական պարերազմի ընթացքի կրրուկ փոփոխությունը 1876 թ. կեսերին

38 «Թարրոն», 1876, 1 դեկտեմբեր:

39 «Թարրոն», 1877, 29 հունվար:

40 «Թարրոն», 1875,6 սեպտեմբեր:

41 «Թարրոն», 1876, 23 դեկտեմբեր:

ի վնաս սերբերի, սրիպեց նրանց դիմելու Ռուսաստանին՝ գործին միջամտելու, հրադադարը իբրև դիվանագիտական գործուն միջազգային հանրությանը ներկայացնելու համար: Այդ մասին հրապարակավ շրջանառվող յուրերին Պարոնյանն արձագանքեց երկբևեռ երգիծանքի շեշտադրումներով կառուցված մի երկխոսությամբ, ուր Ռուսաստանի քաղաքական շահագրգռությունն րնդգծված է սուր սարկազմով: Զինադադարի գործառույթը երգիծաբանը համեմատում է երեխա կնքելու արարողության հետ և մերկացնող բնութագրումներով հավաստիացնում, թե Ռուսաստանի գերնպասակը Բալկանյան երկրկների նվաճումն է. «Բայց ամենէն հաւանականը սա կերելի ինձի, որ Ռուսիան երեխան գիրկը պիտի առնէ, և երբ քահանան հարցնէ իրեն թէ ինչ կուզէ.

-Նրսեք, Բոսնիա և Բուլղարիա,- պիտի պատասխանէր,

-Այդ ի՞նչ քսել է, երեխայ քսածդ հաւարք, յո՛յս, սէր ուզելու է,

-Մեր երեխան արանկ բաներ չուզեր.

-Զարմանալի բան... երեխայի անունը ինչ է՞:

-Զինադադար»<sup>42</sup>:

Զինադադարը չլուծեց «Արևելյան ճգնաժամի» խնդիրները և Փարիզի դաշնագրին մասնակից պետությունները հարկադրված էին ապահովել դիվանագիտական գործունեության նոր մակարդակ՝ հավաքել դիվանագետներին Պոլսում ու քննարկել Բալկանյան երկրներին նոր կարգավիճակ պատու խնդիրը:

Այնուհետև օսմանյան նոր սահմանադրության րնդունման, պալատական հեղաշրջումների և գրաքննական խախտումների վերաբերյալ նյութերը Պարոնյանի համար դարձան իրողություններին անձագանքելու նոր զինանոց, որով րնդլայնվեց նրա սարիքական արվեստի աշխարհագրությունը: «Թապրոն»-ում սկսվեց այդ խնդիրների քաղաքական վերլուծություններին նվիրված նոր էջ, ուր դրսևորվում էին նրա քաղաքական հրապարակախոսության կարողությունները:

42 «Թապրոն», 1876, 16 հոկտեմբեր: